## *1.2. Արտադրություն (ծառայություններ)*

### *1.2.1. Արդյունաբերություն*

*Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը:* 2014թ. հանրապետությունում, ըստ 379 տնտեսավարող սուբյեկտներից ստացված հաշվետվությունների, փաստացի գներով, թողարկվել է 52046.8 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 52166.2 մլն դրամի պատրաստի արտադրանք, որից` ԱՊՀ երկրներում` 17224.5 մլն դրամի, այլ երկրներում` 630.5 մլն դրամի արտադրանք: ԱՊՀ երկրներում իրացված արտադրանքի ծավալը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 123.1 տոկոս, իսկ այլ երկրներում` 161.8 տոկոս:

2013թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 117.2 տոկոս, իսկ առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման` 116.1 տոկոս:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում պետական և ոչ պետական հատվածների տնտեսավարող սուբյեկտների կողմից թողարկված արտադրանքի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար` 30.2 տոկոս և 69.8 տոկոս` 2013թ. համապատասխանաբար 28.7 և 71.3 տոկոսի դիմաց:

*Արդյունաբերական արտադրանքի ծավալը և արտադրության ինդեքսները, 2013-2014թթ.*

| | Թողարկված արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով, մլն դրամ | տոկոսներով | |
|---|---|---|---|
| | | նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ | նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ |
| **2013թ.** | | | |
| Հունվար | 3028.0 | 100.6 | 67.7 |
| Փետրվար | 3203.3 | 99.6 | 106.6 |
| Մարտ | 3399.8 | 93.5 | 99.2 |
| ***I եռամսյակ*** | ***9631.1*** | ***97.7*** | ***79.3*** |
| Ապրիլ | 3162.9 | 99.0 | 93.2 |
| Մայիս | 3386.6 | 120.2 | 124.1 |
| Հունիս | 3500.5 | 109.2 | 99.4 |
| ***II եռամսյակ*** | ***10050.0*** | ***105.5*** | ***109.0*** |
| ***Հունվար-հունիս*** | ***19681.1*** | ***103.2*** | ***X*** |
| Հուլիս | 3138.3 | 109.6 | 95.0 |
| Օգոստոս | 3577.1 | 109.8 | 106.4 |
| Սեպտեմբեր | 3523.9 | 99.3 | 98.9 |
| ***III եռամսյակ*** | ***10239.3*** | ***101.3*** | ***105.8*** |
| ***Հունվար-սեպտեմբեր*** | ***29920.4*** | ***104.1*** | ***X*** |
| Հոկտեմբեր | 4153.4 | 114.2 | 118.0 |
| Նոյեմբեր | 4487.0 | 128.3 | 94.7 |
| Դեկտեմբեր | 5778.6 | 128.3 | 133.9 |
| ***IV եռամսյակ*** | ***14419.0*** | ***100.9*** | ***128.0*** |
| ***Հունվար -դեկտեմբեր*** | ***44339.4*** | ***110.0*** | ***X*** |
| **2014թ.** | | | |
| Հունվար | 3899.1 | 130.6 | 68.9 |
| Փետրվար | 3790.7 | 122.8 | 97.4 |
| Մարտ | 4403.8 | 133.9 | 119.4 |
| ***I եռամսյակ*** | ***12093.6*** | ***129.1*** | ***85.0*** |
| Ապրիլ | 3767.8 | 117.9 | 86.9 |
| Մայիս | 4352.1 | 133.1 | 116.4 |
| Հունիս | 4835.7 | 139.3 | 111.3 |
| ***II եռամսյակ*** | ***12955.6*** | ***130.3*** | ***111.5*** |
| ***Հունվար-հունիս*** | ***25049.2*** | ***129.8*** | ***X*** |
| Հուլիս | 4040.2 | 112.6 | 78.5 |
| Օգոստոս | 4148.4 | 111.0 | 103.4 |
| Սեպտեմբեր | 3901.0 | 110.9 | 100.9 |
| ***III եռամսյակ*** | ***12089.6*** | ***111.5*** | ***90.4*** |
| ***Հունվար-սեպտեմբեր*** | ***37138.8*** | ***123.2*** | ***X*** |
| Հոկտեմբեր | 4384.5 | 102.0 | 105.2 |
| Նոյեմբեր | 4844.8 | 113.1 | 117.7 |
| Դեկտեմբեր | 5678.7 | 99.7 | 123.5 |
| ***IV եռամսյակ*** | ***14908.0*** | ***104.4*** | ***118.6*** |
| ***Հունվար -դեկտեմբեր*** | ***52046.8*** | ***117.2*** | ***X*** |

*Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան ըստ ամիսների՝ տոկոսներով նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ*




*Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2014թ.*

/մլն դրամ/

| | Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, փաստացի գներով[1] | Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով[1] | Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % |
|---|---|---|---|
| ***Ամբողջ արդյունաբերությունը*** | ***52046.8*** | ***52166.2*** | ***117.2*** |
| *այդ թվում՝* | | | |
| ***հանքագործական արդյունաբերություն*** | ***14499.6*** | ***14471.4*** | ***134.8*** |
| *որից՝* | | | |
| մետաղե հանքաքարերի արդյունահանում | 13711.5 | 13728.4 | 138.4 |
| հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր | 788.1 | 743.0 | 93.2 |
| ***մշակող արդյունաբերություն*** | ***20525.6*** | ***20673.2*** | ***105.7*** |
| *որից՝* | | | |
| սննդամթերքների արտադրություն | 11782.1 | 11705.2 | 104.6 |
| խմիչքների արտադրություն | 1983.9 | 2001.3 | 86.6 |
| տեքստիլ (մանածագործական) ապրանքների արտադրություն | 350.2 | 350.2 | 9.4անգ. |
| հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում | 477.8 | 461.6 | 2.5անգ. |
| կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրություն | 633.4 | 896.5 | 75.5 |
| բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն | 1154.2 | 1119.0 | 100.4 |
| թղթի և ստվարաթղթի արտադրություն,հրատարակչական գործ | 0.1 | 0.1 | - |
| հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում | 211.8 | 211.8 | 114.8 |
| ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն | 240.1 | 240.1 | 132.1 |
| այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն | 1690.0 | 1682.6 | 106.6 |
| պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն | 410.2 | 410.2 | 98.5 |
| մեքենաների և սարքավորանքի արտադրություն | 60.0 | 60.0 | 82.2 |
| էլեկտրական մեքենաների և էլեկտրա-սարքավորանքի արտադրություն | 88.7 | 88.7 | 5.4անգ. |
| ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրություն | 31.3 | 30.4 | 119.5 |
| բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի և ժամացույցների արտադրություն | 558.2 | 558.2 | 152.8 |
| կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրություն | 853.6 | 857.3 | 106.3 |
| ***Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում*** | ***17021.6*** | ***17021.6*** | ***119.4*** |
| դրանից՝ | | | |
| Էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում | 17021.6 | 17021.6 | 119.4 |
| որից՝ | | | |
| էլեկտրաէներգիայի արտադրություն և բաշխում | 11463.4 | 11463.4 | 125.2 |
| գազի արտադրություն, գազակերպ վառելիքի բաշխում խողովակաշարերով | 4636.6 | 4636.6 | 105.0 |
| գոլորշու և տաք ջրի մատակարարում | 455.3 | 455.3 | 152.4 |
| ջրի հավաքում, մաքրում և բաշխում | 466.3 | 466.3 | 121.8 |

[1]Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի

*Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն*
*ըստ արտադրության բաժինների, 2014թ. (%)*




*Մշակող արդյունաբերություն (%)*




1. սննդամթերքների արտադրություն
2. խմիչքներրը արտադրություն
3. տեքստիլ (մանածագործական) ապրանքների արտադրություն
4. հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
5. կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրություն
6. բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն
7. թղթի և ստվարաթղթի արտադրություն,հրատարակչական գործ
8. հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում
9. ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
10. այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
11. պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
12. մեքենաների և սարքավորանքի արտադրություն
13. էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրություն
14. ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքերի ու սարքավորումների արտադրություն
15. բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի, ժամացույցների արտադրություն
16. կահույքի արտադրություն, այլ կատեգորիաների մեջ չմտցված պատրաստի իրերի արտադրություն

*Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում (%)*




*Հանքագործական արդյունաբերություն (%)*




Տարածքային կտրվածքով նախորդ տարվա նկատմամբ արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալը ավելացել է հանրապետության բոլոր շրջաններում, բացի Հադրութի շրջանից:

Հարկ է նշել, որ Ստեփանակերտ քաղաքի արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկվել է ընդհանուր արդյունաբերական արտադրանքի 48.8 տոկոսը, իսկ շրջաններից ամենամեծ մասնաբաժինն ունի Մարտակերտի շրջանը՝ 30.7 տոկոսը:

*Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ հանրապետության շրջանների, 2014թ. (%)*




2014թ. թողարկված 52046.8 մլն դրամի արտադրանքի դիմաց իրացվել է 52166.2 մլն դրամի պատրաստի արտադրանք կամ 100.2 տոկոսը:

*Իրացված արտադրանքը թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ (տոկոսներով)*




1. Ամբողջ արդյունաբերությունը
2. Հանքագործական արդյունաբերություն
3. մետաղե հանքաքարերի արդյունահանում
4. հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր
5. Մշակող արդյունաբերություն
6. սննդամթերքների արտադրություն
7. խմիչքների արտադրություն
8. տեքստիլ (մանածագործական) ապրանքների արտադրություն
9. հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
10. կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրություն
11. բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն
12. թղթի և ստվարաթղթի արտադրություն,հրատարակչական գործ
13. հրատարակչական և պոլիգրաֆիական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում
14. ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
15. այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
16. պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
17. մեքենաների և սարքավորանքի արտադրություն
18. էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրություն
19. ռադիոյի, հեռուստատեսության և կապի համար սարքավորանքի արտադրություն
20. բժշկական սարքավորանքի, չափիչ և օպտիկական սարքերի, ժամացույցների արտադրություն
21. կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրություն
22. Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում

Տնտեսական գործունեության տեսակների կտրվածքով իրացվելիության նվազագույն մակարդակ է արձանագրվել հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերում, որտեղ իրացված արտադրանքի հարաբերակցությունը թողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ կազմել է 94.3 տոկոս: Իր հերթին, տվյալ ցուցանիշի առավել բարձր մակարդակ է դիտարկվել կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրությունում (141.5 տոկոս):

2014թ. արդյունաբերական արտադրանքի արտադրությունը և իրացումն ըստ շրջանների բնութագրվում է հետևյալ տվյալներով.

*Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը և իրացումն ըստ շրջանների 2013-2014թթ.*

| | Արտադրանքի /աշխատանքների, ծառայությունների/ ծավալը, փաստացի գներով /մլն դրամ/ | | Պատրաստի արտադրանքի իրացումը, փաստացի գներով /մլն դրամ/ | | Իրացված արտադրանքը տոկոսներով բողարկված արտադրանքի ծավալի նկատմամբ | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2013թ. | 2014թ. | 2013թ. | 2014թ. | 2013թ. | 2014թ. |
| ***Ընդամենը*** | ***44339.4*** | ***52046.8*** | ***44249.6*** | ***52166.2*** | ***99.8*** | ***100.2*** |
| *այդ թվում`* | | | | | | |
| ք.Ստեփանակերտ | 21471.0 | 25393.0 | 21484.5 | 25690.6 | 100.1 | 101.2 |
| Ասկերան | 2633.3 | 2885.7 | 2599.7 | 2801.8 | 98.7 | 97.1 |
| Հադրութ | 1834.9 | 1638.1 | 1764.6 | 1575.2 | 96.2 | 96.2 |
| Մարտակերտ | 12602.7 | 15959.1 | 12596.6 | 15974.8 | 100.0 | 100.1 |
| Մարտունի | 3633.6 | 3681.7 | 3641.2 | 3634.6 | 100.2 | 98.7 |
| Շահումյան | 129.0 | 179.1 | 129.0 | 179.1 | 100.0 | 100.0 |
| Շուշի | 351.6 | 400.9 | 351.6 | 400.9 | 100.0 | 100.0 |
| Քաշաթաղ | 1683.3 | 1909.2 | 1682.4 | 1909.2 | 99.9 | 100.0 |

*Արդյունաբերական արտադրանքի իրացվելիության մակարդակն*
*ըստ շրջանների (տոկոսներով), 2014թ.*




Տարածքային կտրվածքով իրացվելիության ամենացածր մակարդակը դիտվել է Հադրութի շրջանում` 96.2 տոկոս:

2014թ. արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը նախորդ տարվա համեմատ կազմել է 102.2 տոկոս, ընդ որում` հանքագործական արդյունաբերությունում գրանցվել է 2.3 տոկոս, մշակող արդյունաբերությունում` 3.6 տոկոս, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտում` 0.1 տոկոս աճ:

*Արդյունաբերությունում զբաղվածների միջին տարեկան ցուցակային թվաքանակը 2013-2014 թթ.*

*/համապատասխան ժամանակաշրջանի միջին ցուցակային թիվը, մարդ/*

| | 2013թ. | 2014թ. | Դինամիկայի ինդեքսը (տոկոսներով) |
|---|---|---|---|
| **Ամբողջ արդյունաբերությունը** | **6237** | **6372** | **102.2** |
| Հանքագործական արդյունաբերություն | 1456 | 1489 | 102.3 |
| Մշակող արդյունաբերություն | 2738 | 2837 | 103.6 |
| էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում | 2043 | 2046 | 100.1 |

Մեկ աշխատողի կողմից արտադրված արտադրանքն արդյունաբերական կազմակերպություններում 2014թ. կազմել է 8168.0 հազ. դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ համադրելի գներով աճել է 1059.0 հազ. դրամով կամ 14.9 տոկոսով:

*Արդյունաբերական արտադրանքի արտադրության և իրացման ծավալները, ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2014թ.*

| | Տնտեսավարող սուբյեկտների քանակը | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ | Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ | Թողարկված արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով, մլն դրամ | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ | Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն դրամ | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը ԼՂՀ** | **379** | **100.0** | **6372** | **100.0** | **52046.8** | **100.0** | **52166.2** | **100.0** |
| *այդ թվում՝* | | | | | | | | |
| մինչև 5 մարդ *(գերփոքր)* | 257 | 67.8 | 707 | 11.1 | 4453.6 | 8.5 | 4435.4 | 8.5 |
| 6-50 մարդ *(փոքր)* | 94 | 24.8 | 1376 | 21.6 | 11540.2 | 22.2 | 11304.3 | 21.7 |
| 51-100 մարդ *(միջին)* | 12 | 3.2 | 623 | 9.8 | 3998.5 | 7.7 | 4062.9 | 7.8 |
| 101 և ավելի մարդ *(խոշոր)* | 16 | 4.2 | 3666 | 57.5 | 32054.5 | 61.6 | 32363.6 | 62.0 |

Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր և փոքր կազմակերպությունները, որոնց տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 67.8 և 24.8 տոկոս: Հատկանշանական է, որ 92.6 տոկոս կազմող գերփոքր և փոքր կազմակերպությունները թողարկել են արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 30.7 տոկոսը, այն դեպքում, երբ կազմակերպությունների ընդհանուր թվաքանակում 7.4 տոկոս կազմող միջին և խոշոր կազմակերպություններին բաժին է ընկել արդյունաբերական արտադրանքի ամբողջ ծավալի 69.3 տոկոսը:

*Սպառողական ապրանքների արտադրության ծավալը*

*/հաշվետու տարվա համադրելի բացթողման գներով, մլն դրամ/*

| | 2013թ. | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ | 2014թ. | Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ | Դինամիկայի ինդեքսը (տոկոսներով) |
|---|---|---|---|---|---|
| **Սպառողական ապրանքներ, ընդամենը** | **12782.7** | **100.0** | **13033.6** | **100.0** | **102.0** |
| *այդ թվում՝* | | | | | |
| պարենային ապրանքներ | 11331.3 | 88.7 | 11748.0 | 90.1 | 103.7 |
| ոգելից խմիչքներ | 1306.9 | 10.2 | 1070.6 | 8.2 | 81.9 |
| ոչ պարենային ապրանքներ, ընդամենը | 144.5 | 1.1 | 215.0 | 1.7 | 148.8 |
| *այդ թվում՝* | | | | | |
| մշակութակենցաղային նշանակության | 144.5 | 1.1 | 215.0 | 1.7 | 148.8 |

*Հիմնական ապրանքատեսակների արտադրության դինամիկան*

| | Չափման միավորը | 2013թ. | 2014թ. | Աճի տեմպը, տոկոսով |
|---|---|---|---|---|
| Էլեկտրաէներգիայի արտադրությունը (սեփական արտ.) | մլն կվտ/ժ | 193.1 | 224.4 | 116.2 |
| Մշակութակենցաղային նշանակության ապրանքներ* | մլն դրամ | 334.5 | 387.5 | 115.8 |
| *որից՝ կ ա հ ո ւ յ ք* | *մլն դրամ* | *334.5* | *386.6* | 115.6 |
| Կիր | տ | 89.3 | 1579.9 | 17.7անգ. |
| Գաջ | տ | 3170.1 | 3246.3 | 102.4 |
| Շինաքար | ք.մ | 3216.1 | 5107.5 | 158.8 |
| Բետոն | խ.մ | 15996.2 | 10153.9 | 63.5 |
| Ավազ | խ.մ | 21070.5 | 24635.5 | 116.9 |
| Խիճ | խ.մ | 36398.8 | 34900.3 | 95.9 |
| Ասֆալտ | տ | 5642.0 | 4328.0 | 76.7 |
| Երեսապատման սալեր | ք.մ | 28310.7 | 34915.8 | 123.3 |
| Մարմարե բլոկներ | խ.մ | 530.5 | 1474.2 | 2.8անգ. |
| Գրանիտե սալեր | ք.մ | 1043.1 | 234.7 | 22.5 |
| Եզրային քարեր | գծ.մ. | 6734.3 | 6976.3 | 103.6 |
| Պատուհանի կառուցահատված (բլոկ) | ք.մ | 7713.5 | 6680.8 | 86.6 |
| որից՝ *ալյումինե կառուցվածքներ* | *ք.մ* | *5173.0* | *6547.3* | *126.6* |
| Դռների կառուցահատված | ք.մ | 3854.4 | 4062.6 | 105.4 |
| Կարած ապրանքներ* | մլն դրամ | 218.3 | 267.9 | 122.7 |
| Կոշիկ | հազ.զույգ | 102.1 | 58.0 | 56.8 |
| Կոնդենսատորներ | հազ.հատ. | 0.5 | 3.0 | 6.0 անգ |
| Էլեկտրոտրանսֆորմատորներ | հազ.հատ | 0.0 | 0.3 | 0.0 |
| Գորգ | ք.մ | 0.0 | 1180.3 | 0.0 |
| Խաղողի գինի | հազ.լիտր | 226.1 | 175.1 | 77.4 |
| Օղի | հազ.լիտր | 672.2 | 610.5 | 90.8 |
| *որից՝ թթի օղի* | *հազ.լիտր* | 109.9 | 95.9 | 87.3 |
| Կոնյակ | հազ.լիտր | 18.0 | 21.0 | 116.7 |
| Ոչ ալկոհոլային ըմպելիքներ | հազ.լիտր | 851.6 | 3701.6 | 4.3 անգ |
| Միս | տ | 846.3 | 1283.2 | 151.6 |
| *որից՝ թռչնի միս* | *տ* | 734.2 | 767.9 | 104.6 |
| Կարագ գյուղացիական | տ | 27.6 | 26.4 | 95.7 |
| Պանիր | տ | 178.0 | 190.8 | 107.2 |
| Կաթ | տ | 297.1 | 299.5 | 100.8 |
| Կաթնաշոռ | տ | 250.0 | 265.4 | 106.2 |
| Թթվասեր | տ | 879.3 | 1015.7 | 115.5 |
| Մածուն | տ | 606.3 | 641.2 | 105.8 |
| Թան | տ | 61.5 | 69.7 | 113.3 |
| Ալյուր | տ | 10311.6 | 8298.2 | 80.5 |
| Մակարոնեղեն | տ | 129.8 | 25.1 | 19.3 |
| Բուսական յուղ | հազ.լիտր | 91.5 | 168.4 | 184.0 |
| Պոլիէթիլենային խողովակներ | հազ.գծ.մ. | 287.7 | 272.8 | 94.8 |
| Կաղնե տակառներ | հազ. լիտր | 290.2 | 55.9 | 19.3 |
| Մանրատախտակ | ք.մ | 183.3 | 816.2 | 4.5 անգ |
| Խտանյութ | թ.տ.մ. | 22052.0 | 30520.0 | 138.4 |
| Խտանյութ | չ.տ.մ. | 19958.0 | 27665.0 | 138.6 |
| Հանքաքար | չ.տ.մ. | 544635.0 | 663663.0 | 121.9 |
| Քարածուխ | տ | 5967.6 | 996.2 | 16.7 |
| Սղոցանյութ | խ.մ | 2402.1 | 3309.7 | 137.8 |
| Վառելափայտ | խ.մ | 38404.7 | 31920.4 | 83.1 |
| Փայտե աղյուս (բրիկետ) | տ. | 1249.1 | 888.5 | 71.1 |
| Փայտածուխ | տ | 0.0 | 189.2 | - |
| Հաց և հացաբուլկեղեն | տ | 18618.8 | 19424.4 | 104.3 |
| Պահածոներ* | մլն դրամ | 533.9 | 644.8 | 120.8 |
| Հրուշակեղեն | տ | 116.7 | 106.6 | 91.3 |

**) Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի*